

վիճակէն դուրս ունէ մէկը պէտք չէ ձեռնադրէ: Եթէ իր եկեղեցականներէն մէկը մեր վիճակը գալու ըլլայ՝ հիւրասիրութեամբ մեծարուի ու կամաւոր նուէրներ ժողվելու թոյլատրուի. նմանապէս մերիններն ալ եթէ էջմիածինի վիճակները երթան՝ նոյն սիրով եւ նոյն պատիւով ընդունուին: Գալով եկեղեցական արարողութեանց՝ երկու աթոռներէն ոչ մէկը չհամարձակի ընդունուած կարգէն դուրս փոփոխութիւններ մտցնել անոնց մէջ»:

Կ. Պոլիս: Նաեւ կաթողիկոս ընտրուելէն ետքը շարունակեց Մովսէս թղթակցել իւր ուսուցչին՝ Գրիգոր Կեսարացոյ հետ, որ մեծ ձոխութիւն կը վայելէր արեւմուտք, նաեւ պատրիարքական աթոռէն զրկուելէն ետքը: Այս միջոցին պատրիարքական աթոռին վրայ կը գտնուէր Զաքարիա Վանեցի (1626—1633): Սա ի սկզբան պաշտպանեց Սահակ կաթողիկոսի տարապայման խորհուրդը<sup>3</sup>. Թէ անոր ձախողելէն ետքը ի՞նչ դիրք բռնեց Մովսէս կաթողիկոսի հանդէպ, որ աշակերտն էր Զաքարիայի հակառակորդ Գրիգոր Կեսարացոյ, յայտնի չէ. բայց պիտի տեսնենք քիչ յետոյ<sup>4</sup>, թէ Մովսէս կաթողիկոսի եւ Զաքարիայի տեսակէտները նկատմամբ միութեան, որոնք կը զայրացնէին Գրիգոր Կեսարացին, կ'ընդ-  
 փրկէին զիրար:

<sup>3</sup> Հմմտ. վերը՝ էջ 131—133:

<sup>4</sup> Տե՛ս վարը՝ § 33 եւ 34: